մեկ տեսակը՝ արտահայված գրի և գրքի պաշտամունքով:

2. Տնային սրբերը պատմա-ազգագրական տարբեր շրջաններում տարբեր են. դրանց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում գրքերի, հմայիլների, անգամ գրավոր թերթիկների պաշտամունքը:

3. Տնային սրբերն ունեն որոշակի ֆունկցիա՝ բուժում են հիվանդներին, ընդ որում հիվանդությունները որոշակիորեն զատված են ըստ ,,սրբերի,,: Սրբերը հովանավորում են սերունդը, ունեցվածքը և այլն:

4. Սրբերի խնամակալությամբ զբաղված են գրեթե բացառապես կանայք:

5. Վաղ անցյալում, ըստ երևույթին, լինելով հիմնականում տոհմային սրբեր, հետագայում դրանք վերածվել են տնային սրբերի, պահպանելով նախկին ֆունկցիաները, բայց նեղացնելով ազդեցության ոլորտը:

6. Այս կարգի սրբերի պաշտամունքը Խորհրդային Հայաստանում հիմնականում պահպանվել է ազգագրական այն խմբերի մեջ, որոնց նախնիները 19-րդ դարի սկզբներին գաղթել են Արևմտյան Հայաստանից և համախմբված տարաբնակվել:

Բ Ա Ն Ա Հ Յ Ո Ւ Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա. Մ. ՆԱՋԻՆՅԱՆ

ՄՆԱՀԱՎԱՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ ՀԱՐ ԵՎ ԲԱՐԻ ՈԳԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ / ԸՍՏ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ/

1. Սնահավատական զրույցները նշանակալից տեղ են գրավում հայ ազգագրական-բանահյուսական ժեռագիր և տպագիր սկզբնաղբյուրներում: Այդ զրույցները հավաքվել, հրատարակվել և հետազոտվել են որպես ազգագրական օժանդակ, հարակից նյութ /հավատք-սնոտիապաշտություն/:

2. Սնահավատական զրույցը հայ բանավոր-պատմողական արձակի տարածված տեսակներից է, որը հիշյալ ժամանակի ընդհանուր հատկանիշներով հանդերձ տարբերվում է որոշակի կառուցվածքային-ձևաբանական, գաղափարական և կիրառական առանձնահատկություններով:

3. Հայկական սնահավատական զրույցներն ըստ գործող հիմնական դեմքերի /պերսոնաժների/ բաժանվում են մի շարք խմբերի, որոնցից մենք վերցնում ենք երկուսը՝ ա/ զրույցներ չար ոգիների մասին, բ/ զրույցներ բարի ոգիների մասին: Այս խմբերից յուրաքանչյուրն ունի տիպաբանական մի շարք ենթախմբեր ու տարատեսակներ, որոնք պատմա-ազգագրական տարբեր շրջաններում զանազանվում են անվանումներով, բովանդակությամբ և կիրառությամբ:

4. Չար ու բարի ոգիներին վերաբերող սնահավատական զրույցները ծագել և ձևավորվել են վաղագույն շրջանի դիցաբանական պատկերացումների ու հավատալիքների հիման վրա, բայց սահմանաբար վերափոխվելով մուտք են գործել բանավոր-պատմողական արձակի այլ տեսակների մեջ և ձուլվել դրանց / ավանդություն, հեքիաթ, առակ, անեկդոտ/, ձեռք բերելով սոցիալական, կենցաղային և բարոյախոսական բովանդակություն:

5. Որպես հավատք-նախապաշարմունքի վերապրուկներ, այդ զրույցները դարերի ընթացքում արմատներ են ձգել ժողովրդի հոգեբանության ու գիտակցության մեջ, պահպանելով որոշ կայունություն բանավոր խոսքի, առածաբանության, դարձվածաբանության, գեղարվեստական գրականության և արվեստի ասպարեզում:

Ռ.Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

1. Նուրջ 10 տարի / 1965 թվից/ հեղինակը ձեռնամուխ է եղել Սևանի ավազանի հայ ժողովրդական բանահյուսության հավաքման աշխատանքներին: Եղել է Սևանում, Նամոյում, Վարդենիսում և շրջակա գյուղերում:

2. Սևանի ավազանի բնակչությունը Արևմտյան Հայաստանի ու Պարսկահայքի / Մուշ, Ալաշկերտ, [illegible]ալմաստ, Բայազետ/ վերաբնակիչներ են, որոնց բանահյուսությունը հիմնականում կապված է իրենց պատմական հայրենիքի ազգային կենցաղին ու ավանդական սովորույթներին, որով և ներկայացնում են պատմա-ազգագրական կարևոր արժեք:

3. Հավաքված հարուստ ու բազմաժանր նյութերի մեջ աչքի են ընկնում վիպական բանահյուսության տարբեր նմուշներ. զրանցված